600.0037.14.02.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2018 թվականի №37Ա
քաղ. Երևան

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի №96Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն, մայիսի 11-ի №231Ն որոշումները և հաշվի առնելով «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի փետրվարի 1-ի №01-ՄՄ-12/65 և №01-ՄՄ-12/66 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Ուժը կորցրած ճանաչել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի փետրվարի 28-ին «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության «Էներգակապ» մասնաճյուղին տրամադրված ռադիոռելեային կապի գծերի շահագործման №ՌՌԳ/կ-061, №ՌՌԳ/կ-063, №ՌՌԳ/կ-064, №ՌՌԳ/կ-066 թույլտվությունները, հանել №ՌՌԳ/կ-068 թույլտվության 1-ին տողը և 2-րդ տողի «165,650» թիվը:

2. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 29-ի «№ՌՌԳ/կ-061, №ՌՌԳ/կ-063, №ՌՌԳ/կ-064, №ՌՌԳ/կ-066, №ՌՌԳ/կ-067, №ՌՌԳ/կ-068 թույլտվությունները վերաձևակերպելու և դրանց գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №96Ա որոշմամբ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության անվամբ վերաձևակերպված և նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0334 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «մինչև 2018 թվականի մարտի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի մարտի 1-ը» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված №0334 ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Ընդունել ի գիտություն, որ «Էլեկտրաէներգետիկական համարարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունն իրավասու է.
   1. սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2. սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 1-ից, իսկ 2-րդ կետը՝ 2018 թվականի մարտի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 փետրվարի 2018 թ.